Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 30-ի N 463-Ա
որոշման

«ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1.	**Ծրագրի նպատակը**	Վերակառուցել 1988 թ.-ին երկրաշարժի հետևանքով վնասված քաղաքային «Բարեկամության» զբոսայգին: Ապահովել Գյումրի քաղաքի բնակիչներին զբոսանքի և ժամանցի համար բարենպաստ պայմաններով: Ապահովել երկրաշարժից տուժած տնակային ավաններում ապրող 20 ընտանիքներին բնակարաններով: Գյումրի քաղաքի երիտասարդների, ինչպես նաև հարակից տարածքում գտնվող մանկական հիվանդանոցի երեխաների համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ կառուցելով հարմարավետ և հետիոտնի համար հաճելի զբոսանքի արահետներ: Նպաստել Հայաստանի 2-րդ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Նպաստել Գյումրի քաղաքի բնականոն զարգացմանը՝ ստեղծելով սոցիալական հարթակ հասարակության լայն զանգվածների համար: Զբոսայգու վերականգնումը կնպաստի քաղաքաշինության լայնածավալ զարգացմանը՝ մոտակա շրջանները պատմական կենտրոնի հետ ինտեգրելու հարցում և հարևան բնակավայրերի քաղաքացիներին շփման հարթակ ստեղծելու համար:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Ծրագրերի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Հայաստանի զարգացման նախաձեռնություններ բարեգործական հիմնադրամը, ֆիզիկական անձինք (ներառյալ առանձին բարերարներ), հայկական և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններ, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ (ներառյալ բարեգործական), «Ազնավոր» հիմնադրամը

4.	**Ծրագիրը կատարողը**	Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ (նախկին անվանումը՝ Հայաստանի զարգացման նախաձեռնություններ բարեգործական հիմնադրամ) Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 6 Գործունեության հասցե՝ ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 6, ՀՎՀՀ՝ 02628286 գրանցված՝ 23.05.2014 թ.	
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, «Բարեկամության» այգի: Սոցիալական, այդ թվում՝ բնության և շրջակա միջավայրի պահպանում և բարեկարգում	
6.	**Ծրագրի բյուջեն**	Ծրագրերի իրականացման բյուջեն կկազմի **4,034,633,321** դրամ	
7.	**Բարեգործությունն ստացողը**	Գյումրի քաղաքի բնակիչները, Բարեկամության այգու տարածքին կից գործող մանկական հիվանդանոց այցելող և այնտեղ բուժվող հայերը, Հայաստանի Հանրապետություն այցելող հայերը և զբոսաշրջիկները, Գյումրի քաղաքի այցելուները, այգու տարածքում բնակելի և առևտրային տարածքներում բնակվող/աշխատող հայերը	
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	01.07.2018 թ. – 31.08.2023 թ.	
9.	**Ծրագրի նկարագրությունն և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	**Միջոցառումների անվանումն ու նկարագրությունը**	**Գնահատված ծախսեր, դրամ,**
		1. **Տնակային ավաններում ապրող անօթևան ընտանիքներին բնակարաններով ապահովելու միջոցառումներ:** ***01.07.2018թ. – 30.11.2019 թ.*** Տվյալ միջոցառման շրջանակներում իրականացվել է 20 անօթևան ընտանիքներին նվիրատվություն **98,911,600 դրամի չափով** (յուրաքանչյուր ընտանիքին միջինը 5 մլն դրամ)՝ վերջիններիս համար բնակարաններ ձեռք բերելու	**120,000,000**

	նպատակով, ինչպես նաև կատարվել է ուսումնասիրություն տնակային ավաններում ապրողների կարգավիճակի, կարիքների և այլ մանրամասնությունների վերաբերյալ, անցակցվելու է վաճառքի ենթական բնակարանների հավաքագրում՝ հաշվի առնելով տնակային ավաններում ապրողների կարիքները և անչափահասների քանակը տվյալ տնակում: Տնակներում ապրողների հետ, Գյումրու քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպվել է հասարակական քննարկում՝ վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, որի արդյունքում բնակիչներին առաջարկվել է նոր բնակավայրերի տարբերակ: ***01.08.2020 թ. –30.05.2021 թ.*** Նախատեսվում է ուսումնասիրել այգուն կից փողոցին տեղակայված ևս մի քանի տնակային ավանների բնակիչների կարիքները, և քաղաքապետարանի հետ համատեղ գնահատվելու է տվյալ ընտանիքներին նվիրատվություն տրամադրելու անհրաժեշտությունը: Վերջինիս համար նախատեսվում է օգտագործել **21,088,400 դրամ:** Սկիզբ՝ 01.08.2020 թ., ավարտ՝ 30.05.2021 թ.	
	2. **Նախագծման, պլանավորման և այլ մասնագիտական աշխատանքների իրականացում.** ***10.01.2019 թ. – 01. 06. 2020 թ.*** Իրականացվել է տարածքի ընդհանուր ուսումնասիրություն, տեղագրական հանույթ, կոնցեպտուալ և կանաչապատման նախագիծ՝ **29,329,890 դրամի չափով** ***01. 08. 2020 թ. -30.04.2021 թ.***	**236,909,890**

Միջոցառման ընթացում նախատեսվում է տարածքի էսքիզային պլանավորում, տեղագրական հանույթ և երկրաբանական ուսումնասիրություն, ճարտարապետաշինարարական նախագծերի մշակում, ինժեներական հետազոտություններ, մասնագիտական և դիզայներական աշխատանքներ: Իրականացվելու է հեղինակային և տեխնիկական վերահսկում: **207,580,000 դրամի չափով** Սկիզբ՝ 01. 08.2020 թ., ավարտ՝ 30.04.2021 թ.	
3. **Հողային աշխատանքներ.** ***30.09.2020 թ.- 30.05.2021 թ.*** 7.2 հա տարածքում խոպան հողի համապատասխան մշակում, հին կառույցների մնացորդների քանդում, շինաղբի դուրսբերում, նոր հողի տեղափոխում: Բետոնե հատակների քանդում, տարածքի նախնական համահարթեցում, Սկիզբ՝ 30.09.2020 թ., ավարտ՝ 30.05.2021թ.	**352,961,000**
4. **Ինժեներական ենթակառուցվածքներ.** ***01.10.2020 թ.- 30.05.2021 թ.*** 7.2 հա տարածքում ինժեներական ենթակառուցվածքների տեղադրում: Մասնավորապես, արտաքին կոյուղի, ջրահեռացման համակարգ, արտաքին ջրամատակարարման և ոռոգման համակարգ, արտաքին էլեկտրական ցանցեր և բացօթյա լուսավորություն: Սկիզբ՝ 01.10.2020 թ., ավարտ՝ 30.05.2021 թ.	**378,114,430**
5. **Առկա շինություններ.** ***01.03.2021 թ.- 01.06.2023 թ.*** Գոյություն ունեցող շինությունների վերակառուցում	**524,050,000**

	(բեմ, այգու մուտք): Սանհանգույցների, սպասարկման շինարարությունների տեղադրում: Սկիզբ՝ 01.03.2021 թ., ավարտ՝ 01.06.2023 թ.	
	6. **Բարեկարգման աշխատանքներ, այդ թվում՝ կանաչապատում.** ***01.03.2021 թ.- 31.08.2023 թ.*** 7.2 հա տարածքի բարեկարգում՝ արահետների և հեծանվաուղիների մշակում, ջրային մակերևույթների ստեղծում և կանաչապատման աշխատանքներ: Սկիզբ՝ 01.03.2021 թ., ավարտ՝ 31.08.2023 թ.	**900,138,000**
	7. **Այգու տարածքում տեղադրվող կարուսելների ներմուծում և պահեստավորում** ***01.11.2018 թ.- 01. 07. 2020 թ.*** Իրականացվել է կարուսելների, բաղադրամասերի առանձին մասերի և այլ սարքավորումների ձեռքբերում, կարուսելների տեխնիկական զննում, տրանսպորտային տեղափոխման հետ կապված այլ ծախսեր, մաքսազերծման հետ կապված ծախսեր: Մինչև 01. 07. 2020 թ. ՝ ընդհանուր **68,566,825 դրամի չափով**: ***01. 08. 2020 թ. - 30. 06. 2021 թ.*** Նախատեսվում է շարունակել ներմուծված կարուսելների պահեստավորում, նոր կարուսելների ձեռքբերում և պահեստավորում, տեխնիկական զննում, տրանսպորտային և մաքսազերծման ծախսեր: Մասնագիտական ծախսեր՝ կապված կարուսելների այգում տեղադրման հետ, ինժեներական և տեխնիկական վերահսկում: Միջոցառման գնահատված ծախսերը կազմում են	**100,000,000**

31,433,175 դրամ: Սկիզբ՝ 01.08.2020 թ., ավարտ՝ 30.06.2021 թ.	
8. **Կարուսելների տեղադրում** ***01.05.2021 թ.- 30.09.2021 թ.*** կարուսելների և դրանց կառավարման կետերի տեղակայման տարածքի բարեկարգում, դրանց մոնտաժում, տեղադրում և գործարկում: Սկիզբ՝ 01.05.2021 թ., ավարտ՝ 30.09.2021 թ.	**55,000,000**
9. **Շարժական գույքերի վերանորոգման, ընթացիկ սպասարկման ծառայություններ:** Սկիզբ՝ 01.08.2021 թ., ավարտ՝ 31.08.2023 թ.	**20,000,000**
10. **Այգու 7.2 հա հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքի ձեռքբերում՝ հանրային հողերի վարձակալություն:** 01.06.2019 թ. -01. 07. 2020 թ. տվյալ միջոցառման շրջանակներում ծախսվել է **1,633,283 դրամ:** 01. 08.2020 թ. - 31.08.2023թ. Նախատեսվում է ծախսել **5,089,217 դրամ:** Սկիզբ՝ 01.08.2020 թ., ավարտ՝ 31.08.2023 թ.:	**6,722,500**

11. **Խորհրդատվական և կառավարչական ծառայություններ.** *01. 08. 2020 թ. - 31. 08. 2023 թ.* Իրավաբանական և հաշվապահական ծառայություններ, ծրագրի իրականացման հետ կապված աուդիտորական, գրասենյակային և վարչական այլ ծախսեր, վարչական աշխատակիցների աշխատավարձ և գործուղման ծախսեր: Սկիզբ՝ 01. 08. 2020 թ. ավարտ՝ 31.08.2023 թ.:	**241,220,002**
12. **Տրանսպորտային ծառայություններ.** 01.07.2018 թ. – 01. 07. 2020 թ. իրականացվել է **6,041,524 դրամի չափով:** 01. 08. 2020 թ. – 31. 08. 2023 թ. Նախատեսվում է իրականացնել **14,007,975 դրամի չափով:** Սկիզբ՝. 01. 08. 2020 թ., ավարտ՝ 31.08.2023 թ.:	**20,049,499**
13. Այգու հանդիսավոր բացման, ներկայացուցչական ծախսեր. 01. 07. 2018 թ. - 01. 07. 2020 թ. Տարեկան /եռամսյակային հանդիպումների կազմակերպում, այդ թվում՝ շահառուների համար հյուրանոցային ծառայությունների, ավիատոմսերի, սննդի, տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում: Իրականացվել է ընդհանուր **13,580,000 դրամի չափով:** 01. 08. 2020 թ. - 31. 08. 2023 թ. Նախատեսվում է իրականացնել ևս **17,000,000 դրամի չափով:** Սկիզբ՝ 01.08.2020 թ., ավարտ՝ 31.08.2023 թ.:	**30,580,000**

	14. Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր. 01. 07. 2018 թ. - 01. 07. 2020 թ. տպագրական և դիզայներական ծառայություններ, այդ թվում՝ բուկլետների, այցեքարտերի, տոմսերի, հրավիրատոմսերի, հուշանվերների և այլ փաստաթղթերի գնում/տպագրություն և ձևավորում՝ ընդհանուր **3,395,000 դրամի չափով:** 01. 08. 2020 թ. - 31. 08. 2023 թ. Նախատեսվում է իրականացնել ևս **26,605,000 դրամի չափով:** Սկիզբ՝ 01.08.2020 թ., ավարտ՝ 31.08.2023 թ.	**30,000,000**
	15. Այգու ադմինիստրատիվ կենտրոնի կառուցում. վերանորոգում և կահավորում, Սկիզբ՝ 01.05.2021 թ., ավարտ՝ 31.08.2022 թ.	**150,570,000**
	16. Արհեստական լճակի կառուցում, շինարարական և վերանորոգման աշխատանքներ Սկիզբ՝ 01.05.2021 թ., ավարտ՝ 30.09.2022 թ.	**265,342,000**
	17. Բացօթյա սպորտային հանգստի գոտու կառուցում, սպորտային մարզանքների սարքավորումների տեղադրում, ընթացիկ վերանորոգում Սկիզբ՝ 01.04.2021 թ. – 01.06.2022 թ.	**192,976,000**
	18. Ամֆիթատրոնի և ամառային կինոդահլիճի կառուցում, շինարարական ծախսեր, այդ թվում՝ կառուցապատման	**410,000,000**

		համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, տեխնիկա և դրա մոնտաժման հետ կապված ծախսեր Սկիզբ՝ 01.05.2021 թ., ավարտ՝ 31.08.2023 թ.	
		Ընդամենը	**4,034,633,321**
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	• Տարածքի ուսումնասիրություն ճանապարհային ենթակառուցվածքի, ոռոգման, հոսանքի և այլ կոմունիկացիոն ցանցերի առկայության և խնդիրների վերաբերյալ, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ուսումնասիրություն, ձևավորում և դրանց հետ կապված այլ աշխատանքներ: Ճարտարապետական և շինարարական նախագծերի մշակում, տարածքի էսքիզային պլանավորում, տեղագրական հանույթ և երկրաբանական ուսումնասիրություն, դիզայներական աշխատանքներ և հեղինակային ու տեխնիկական վերահսկում: Ընդհանուր՝ **236,909,890 դրամի չափով,** որից՝ **29,329,890 դրամն** օգտագործվել է, նախատեսվում է օգտագործել **207,580,000 դրամ:** • Խոպան հողի համապատասխան մշակում, հին կառույցների մնացորդների քանդում, շինաղբի դուրսբերում, նոր հողի տեղափոխում: Բետոնե հատակների քանդում, տարածքի նախնական համահարթեցում- **352,961,000 դրամ:** • Ինժեներական ենթակառուցվածքների տեղադրում: Մասնավորապես, արտաքին կոյուղի, ջրահեռացման համակարգ, արտաքին ջրամատակարարման և ոռոգման համակարգ, արտաքին էլեկտրական ցանցեր և բացօթյա լուսավորություն- **378,114,430 դրամ:** • Գոյություն ունեցող շինությունների վերակառուցում (բեմ, այգու մուտք): Սանհանգույցների, սպասարկման շինարարությունների տեղադրում- **524,050,000 դրամ:** • 7.2 հա տարածքի բարեկարգում՝ արահետների և հեծանվաուղիների մշակում, ջրային մակերևույթների ստեղծում և շատրվանների կառուցում, նստարանների տեղադրում, մանկական հարթակների մշակում և տեղադրում, կառուսելների հարթակների տեղադրում, հողային շղթա-**600,138,000 դրամ:** • Ծառերի և թփերի գնում (ներմուծում) և տեղադրում - **300,000,000 դրամ:** • Կարուսելներ և իրենց բաղադրիչ մասեր, պահեստամասեր և այլ սարքավորումների, ներմուծում (ներառյալ տեղափոխման, պահեստավորման, տեխնիկական զննման ծախսեր)-**100,000,000 դրամ,** որից **65,305,875 դրամը** 11 կառուսելների և իրենց բաղադրիչ մասերի ներմուծման արժեքն է, **3,260,950 դրամը** կարուսելների պահեստավորման արժեքը, իսկ **31. 433. 175 դրամը** նախատեսվում է օգտագործել նոր կարուսելների ներմուծման, տեխնիկական զննման և պահեստավորման համար:	

		• Կարուսելների և դրանց կառավարման կետերի տեղակայման տարածքի բարեկարգում, դրանց մոնտաժում, տեղադրում և գործարկում- **55,000,000 դրամ:** • Շարժական գույքերի վերանորոգման, ընթացիկ սպասարկման ծառայություններ- **20,000,000 դրամ:** • Իրավաբանական, հաշվապահական և այլ մասնագիտական խորհրդատվական ծառայություններ – **110,597,146 դրամ:** • Տրանսպորտային ծախսեր – վառելիք, լոգիստիկ ծախսեր, մաքսային, բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ- **15,049,499 դրամ,** որից օգտագործվել է 5,910,524 **դրամը,** նախատեսվում է օգտագործել **9,138,975 դրամ** • Այգու հանդիսավոր բացման, ներկայացուցչական ծախսեր, տարեկան /եռամսյակային հանդիպումների կազմակերպում, այդ թվում՝ շահառուների համար հյուրանոցային ծառայությունների, ավիատոմսերի, սննդի, տրանսպորտային ծառայությունների ձեռք բերում- **30,580,000 դրամ,** որից օգտագործվել է **13,580,000 դրամ,** նախատեսվում է օգտագործել **17,000,000 դրամ:** • Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր՝ տպագրական և դիզայներական ծառայություններ, այդ թվում՝ բուկլետների, այցեքարտերի, տոմսերի, հրավիրատոմսերի, հուշանվերների և այլ փաստաթղթերի գնում/տպագրություն և ձևավորում- **30,000,000 դրամ,** որից օգտագործվել է **3,395,000 դրամ,** նախատեսվում է օգտագործել **26,605,000 դրամ:** • Այգու ադմինիստրատիվ կենտրոնի կառուցում և վերանորոգում, կահավորում-**150,570,000 դրամ:** • Արհեստական լճակի կառուցում -**265,342,000 դրամ:** • Բացօթյա սպորտային հանգստի գոտու կառուցում, սպորտային մարզումների սարքավորումների տեղադրում, ընթացիք վերանորոգում - **192,976,000 դրամ:** • Ամֆիթատրոնի և ամառային կինոդահլիճի կառուցում, վերանորոգում, այդ թվում՝ կառուցապատման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, մոնտաժման հետ կապված ծախսեր- **410,000,000 դրամ:**
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպ-չական ծախսերը**	• Վարչական աշխատակիցների աշխատավարձը - **80,498,285 դրամ:** • Իրավաբանական, հաշվապահական և այլ մասնագիտական խորհրդատվական ծառայություններ – **110,597,146 դրամ:** • Գործուղման ծախսեր – հյուրանոցային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, ավիատոմսեր և օրապահիկներ, որը նախատեսված է կազմակերպչական աշխատակազմի, ծրագրի ղեկավար անձնակազմի համար- **50,124,571 դրամ:** • Վառելիք- **5,000,000 դրամ:**

		• Շիրակի մարզ, Գյումրու համայնք, Գ. Նժդեհի փողոց 1/1 զբոսայգու հասցեում գտնվող 7.2 հա հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքի ձեռք բերում- **6,722,500 դրամ:** • Միջոցառումների կազմակերպման, ներկայացուցչական ծախսեր – **30,580,000 դրամ:**
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ**	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ էկոնոմիկային նախարարություն (տուրիզմի պետական կոմիտե), ՀՀ Շիրակի մարզպետարան, Գյումրու համայնքապետարան:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Սույն ծրագրի իրականացման վերահսկողությունն իրականացնելու է Հայաստանի զարգացման նախաձեռնություններ բարեգործական հիմնադրամը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Գյումրու համայնքապետարան, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմիններին: Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ